**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

***«ԴՏՊ-1160-11013/Ե»***

Քաղ. Երևան «18» «01» 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Սամվել Մուրադյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամը, ի դեմս տնօրեն **Մուշեղ Կիրակոսյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում»** ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան և գինը**

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև **18 453 864 (տասնութ միլիոն չորս հարյուր հիսուն երեք հազար ութ հարույր վաթսուն չորս)** ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: **Ծրագիրը իրականացվում է Երևան քաղաքում՝ ամսական 14 հաշմանդամություն ունեցող անձանց համար (շուրջօրյա խնամք):**

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

[illegible]
[illegible]
[illegible]

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու **ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների,** ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի **հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը:** Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

**3. Մոնիթորինգը**

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

**4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը**

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

**5. Վճարման կարգը և ժամկետները**

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

**6. Կողմերի պատասխանատվությունը**

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**7. Պայմանագրի գործողության ժամկետը**

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Եզրափակիչ դրույթներ**

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6 ):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ *https://www.mlsa.am/?cat=142* կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը*՝ «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 1
2022 թ. «01» «18» -ին
կնքված N *ԴՏՊ-1160-11013/Ե պայմանագրի*

# «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ

## Համառոտագիր

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» շուրջօրյա խնամքի ծրագիրը, որի գործունեության նպատակը մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդների շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով նրանց սոցիալական ներառումն է: Խմբային տունն իր տեսակի մեջ Հայաստանում նախադեպը չունեցող կառույց է, որը միայնակ, ծնողազուրկ, մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդ անձանց համար ստեղծել է ընտանեկանին մոտ միջավայր, որտեղ բնակվող անձանց տրամադրում է շուրջօրյա խնամք, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, սննդի ապահովման, ժամանցի ծառայություններ, մասնագիտական հմտությունների ձեռքբերման, ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցումներ՝ նրանց համար ապահովելով հարմարավետ կահավորված օթևան, օրական չորս անգամյա սնունդ, հագուստ, հիգիենիկ պարագաներ և այլն: Խմբային տանը շուրջօրյա ծառայություններ են ստանում մտավոր հաշմանդամություն ունեցող 14 հաշմանդամ երիտասարդներ, որոնց խնամքին և այլ ծառայությունների մատուցմանն ուղղված աշխատանքներին մասնակցող հիմնական կազմը բաղկացած է 13 աշխատակիցներից՝ հոգեբան, հոգեբույժ, ձեռքի աշխատանքի ուսուցիչ, սոց. սպասարկողներ, սոց աշխատող: Ծրագիրը իրականացվում է ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում գտնվող եռահարկ առանձնատանը, որը հնարավորինս հարմարեցված է բնակիչների կարիքներին և ծրագրային նպատակներին: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 533 ք/մ: Բացի այդ տարածքում գտնվում է օժանդակ շինություն՝ 57,95 ք/մ մակերեսով, որը նախատեսված է բարդ վարքագծեր ունեցող նաև առանձնահատուկ մոտեցում պահանջող բնակիչների համար, որպես ժամանակավոր կացարան, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու հոգեբուժական հաստատություններից:

## Ծրագրի նկարագրություն

Հայաստանը ժառանգել է հոգեկան առողջության և մտավոր հաշմանդամության պահպանման այնպիսի համակարգ, որտեղ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները սահմանափակ են՝ կենտրոնացած հոգեբուժական և խնամքի ինստիտուցիոնալ, փակ հաստատություններում:

2010 թ. ՀՀ-ն, վավերացնելով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան, պարտավորություն է ստանձնել աջակցել, պաշտպանել և ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվելու մարդու իրավունքներից և ազատություններից, ինչպես նաև՝ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն, մասնակից պետությունները ճանաչում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ համայնքում ապրելու իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրության հնարավորությամբ, ձեռնարկում են արդյունավետ և համապատասխան միջոցներ՝օժանդակելու այդ իրավունքից լիակատար օգտվելուն: ՀՀ-ն պարտավորություն ունի ապահովելու հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝մյուսների հետ հավասար հիմունքներով հնարավորությունը՝ ընտրելու բնակության վայրը, որտեղ և ում հետ ապրելը, բնակության հետ կապված և համայնքային այլ ծառայություններից օգտվելը, համայնքում ապրելու, ներգրավվելու և համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցությունը:

Մինչդեռ ՀՀ-ում դեռևս առկա են հաստատություններ, որտեղ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող չափահաս անձիք շարունակում են բնակվել անչափահաս երեխաների հետ, քանի, որ այլընտրանքային ծառայությունները չեն գործում բավարար քանակով, ինչպես նաև, այլընտրանքային ծառայությունները չեն կրում համակարգային բնույթ:

«Ջերմիկ Անկյուն» հիմնադրամի կողմից տրված լուծումները ներառում են.

տրամադրել ապահով կացարան և տուն, ֆիզիկական և էմոցիոնալ պաշտպանություն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ ներկայացնելով ավելի լայն համայնքներին,
- ապահովել բովանդակալից և ինքնաբավ կենցաղ տան բնակիչներին, որպեսզի բնակիչն ինքը և համայնքը գիտակցեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն աշխարհին առաջարկելու բազում շնորհքներ:
- տրամադրել այլընտրանք խոշոր հաստատություններին և, ինչպես մենք իրականացրեցինք, ապացուցել, որ խմբային տունը ծախսարդյունավետ և էֆեկտիվ է խնամքի կառավարման հարցում,
- խթանել տեղեկատվության տարածումը, առ այն, որ հաշմանդամությունը գոյություն ունի և պայմանավորված չի մոր, ընտանիքի կամ հաշմանդամություն ունեցող անձի մեղքով, ստեղծել խնամքի, պաշտպանության և վերարտադրության կայուն մոդել,, որը համառորեն պաշտպանում է հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները և հարգվում է համայնքի, ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:
«Ջերմիկ Անկյուն» խմբային փոքր տները հրատապ անհրաժեշտություն են: Հաշմանդամություն ունեցող անձանց համար իրավիճակը, մեղմ ասած, ծանր է, և մենք պարտավոր ենք հնարավորինս շատ անհատներ փրկել այդ հաստատություններից և ավելի լիարժեք կյանքով ապրելու հնարավորություն տալ նրանց:

**Կազմակերպության փորձառությունը**

**Կազմակերպության առաքելությունը՝**

«Ջերմիկ Անկյուն»-ը համամարդկային շարժում է, որը տրամադրում է մշտական տներ հատուկ կարիք ունեցող միայնակ անձանց համար:
«Ջերմիկ Անկյան» առաքելությունն է՝

- ✓ Տրամադրել տներ հատուկ կարիք ունեցող այն չափահաս անձանց համար, ովքեր ունեն հաշմանդամություն, ծնողազուրկ են, միայնակ ապրել չեն կարող և կարիք ունեն կացարանի և աջակցության:
- ✓ Կանխել մանկատների հատուկ կարիքներ ունեցող չափահաս սաների կյանքի մնացյալ մասն անօթևան կամ հոգեբուժարաններում ապրելը և օգնել նրանց պաշտպանել իրենց իսկ անունից:
- ✓ Տրամադրել բնակիչներին անհատական խնամք խմբային տան միջավայրում, որը հնարավորինս վերարտադրում է ընտանեկան կյանքը և հնարավորություն է տալիս նրանց ապրել հնարավորինս ինքնուրույն և վստահ:

**Ոլորտում իրականացված ծրագրերը՝**

**Ծրագրի անվանումը՝** «Մտավոր հաշմանդամություն ունեցող 14 ծնողազուրկ երիտասարդների մշտական խմբային տուն Երևանում»

**Ծրագրի նպատակը՝** Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի շրջանավարտների համար ստեղծել շուրջօրյա խնամքի փոքր տուն, որտեղ ապահովված կլինի նրանց սոցիալական վերականգնումն ու սոցիալական ներառումը, զբաղվածությունը, անհատական մոտեցման և կարիքի գնահատման հիման վրա խնամքն ու զարգացումը:

**Ծրագրի արդյունավետությունը՝** Ծրագիրը գործում է շուրջ 14 տարի, որի ընթացքում տան բնակիչները ստացել են համապատասխան ծառայություններ՝ հիմք ընդունելով ծրագրի նպատակները, սովորել են ինքնասպասարկման հմտություններին, կենցաղավարությանը, փոխօգնությանը, շահերի պաշտպանությանը և այլն:

**Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները**

**Ծրագրի նպատակը.**

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» ծրագիրը, որի գործունեության նպատակը մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդների շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով նրանց սոցիալական ներառումն է: Խմբային տունն իր տեսակի մեջ Հայաստանում նախադեպը չունեցող կառույց է, որը միայնակ, ծնողազուրկ, մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդ անձանց համար ստեղծել է ընտանեկանին մոտ պայմաններ, որտեղ բնակվող անձանց տրամադրում է շուրջօրյա խնամք, սոցիալ-հոգեբանական, առողջապահական,

սննդի ապահովման, ժամանցի ծառայություններ, մասնագիտական հմտությունների ձեռքբերման, ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցումներ՝ նրանց համար ապահովելով հարմարավետ կահավորված օթևան, հագուստ, հիգիենիկ պարագաներ և այլն:

**Ծրագրի խնդիրները.**

Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայության հիմքում են հետևյալ խնդիրները՝

- շուրջօրյա բարձրակարգ խնամքի ապահովում՝ հիմք ընդունելով շահառուներից յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու կարիքները,
- շահառուների ինքնուրույն, լիարժեք կյանքի կազմակերպում՝ ինքնասպասարկման հմտությունների ուսուցանման միջոցով ,
- հասարակության մեջ ինտեգրման և լիարժեք անդամ ներկայանալու հնարավորության ապահովում՝ համայնքային կյանքին ակտիվ ներգրավվածության միջոցով,
- աշխատանքային թերապիայի կազմակերպում, որպես զբաղվածության և վարքագծային խնդիրների շտկման արդյունավետ միջոց,
- անհատական նպատակների սահմանում, պլանային, հետևողական աշխատանքի կազմակերպում և արդյունքների ամսական գնահատում:

Վերոնշյալ խնդիրների լուծման հիմքում ընկած է շահառուների ակտիվ ներգրավվածությունը նպատակների սահմանման, կենցաղի կազմակերպման, իրագործման և բոլոր այլ միջոցառումների իրականացմանը: Խնդիրների իրագործումը կատարվում է մասնագիտացված թիմի կողմից, որը պարբերաբար վերապատրաստումներ է անցնում «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի ղեկավարության կողմից՝ տարիների ընթացքում ձևավորված արդյունավետ մեթոդաբանության միջոցով: Նաև մեծ կարևորություն է տրվում պարբերաբար, նաև ըստ անհրաժեշտության, խորհրդատվության տրամադրմանը՝ անարդյունավետ և սխալ մոտեցումներից խուսափելու և միանման աշխատանք կատարելու նպատակով:

**Ակնկալվող արդյունքները.**

Մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար շուրջօրյա խնամքի ծառայության արդյունավետ իրականացումը հնարավորություն է տալիս այդ անձանց ունենալու իրենց մշտական տունը: Բացի այդ նպաստում է հասարակությունում լիարժեք անդամ ներկայանալու, զբաղվածության ապահովման, հմտությունների և այլ կարողությունների զարգացմանը, որոնք իրենց հերթին նպաստում են նրանց կյանքի որակի բարձրացմանը: Շատ կարևոր հանգամանք է հանդիսանում փոքր տների միջոցով խնամքի և կացարանի կազմակերպումը, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր շահառուին անհատական մոտեցում ցուցաբերելու, որը բարձրացնում է ծրագրի արդյունավետությունը և նպաստում է ծրագրի առջև դրված խնդիրների առավել լիարժեք իրագործմանը: Քանի որ շուրջօրյա խնամքի համար նախատեսված տները բացառապես գտնվում են փոքր համայնքներում՝ շրջապատված հարևաններով, որպես ծրագրի շատ կարևոր ազդեցություն, ներկայանում է համայնքների բնակիչների ներգրավվածությունը և առողջ շփման ձևավորումը մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և համայնքի այլ բնակիչների միջև:

**Գործողություններ**

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ*

*Կազմակերպություն* ***«Ջերմիկ անկյուն» հիմնադրամ***

*Ծրագիր* ***«Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում»***

*Ժամանակահատված* ***01.01.2021-31.12.2021***

| Հ/Հ | Գործողություն | Պատասխանատու | Ամիս | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | *Տարեկան նպատակների սահմանում և ենթանպատակների ու խնդիրների ամրագրում* | *Յուրաքանչյուր բնակչին կցված սոցիալական սպասարկողը և սոցիալական աշխատողը* | V | V | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | *Բնակիչների պեղեկատվության հավաքագրում՝ համապատասխան փաստաթղթերի միջոցով, կարիքի գնահատում* | *Յուրաքանչյուր բնակչին կցված սոցիալական սպասարկողը և սոցիալական աշխատողը* | V | V | | | | | | | | | | |
| 3 | *Արդյունավետության ամսական և պարբեկան գնահատում* | *Յուրաքանչյուր բնակչին կցված սոցիալական սպասարկողը և սոցիալական աշխատողը* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |
| 4 | *Նոր նպատակների սահմանում՝ հաշվի առնելով նախկին նպատակների արդյունավետությունն ու հաջողությունները նաև շահառուի նոր կարիքները* | *Յուրաքանչյուր բնակչին կցված սոցիալական սպասարկողը և սոցիալական աշխատողը* | V | V | | | | | | | | | | |
| 5 | *Զբաղվածության կազմակերպում և մասնագիտական ուսուցում՝ անհատական պլանի և գնահատման հիման վրա* | *Ռեռքի աշխատանքի ուսուցիչ, սոցիալական սպասարկող* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |
| 6 | *Կենցաղավարության հմտությունների կազմակերպում* | *Սոցիալական սպասարկող* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |
| 7 | *Հոգեբանական խորհրդատվություն* | *Հոգեբան* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |
| 8 | *Հոգեբուժական խորհրդատվություն և միջամտություն* | *Հոգեբույժ* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |
| 9 | *Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում* | *Սոցիալական աշխատող* | V | V | V | V | V | V | V | V | V | V | V | V |

**Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը**

**Ծրագրի ուղղակի շահառուները**

«Ջերմիկ անկյուն» խմբային տան շահառուներն են՝ 18 տարին լրացած, մտավոր հաշմանդամություն ունեցող այն երիտասարդները, որոնք միայնակ են, ինքնուրույն ապրել չեն կարող և ցանկանում են հանդիսանալ շահառու: Ք. Երևանի, Սիլիկյան թաղամասում գործող խմբային տանը բնակվում են 14 երիտասարդներ, որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 հատուկ կրթահամալիրներից:

Նոր շահառուների ներգրավվելու և համապատասխան ու նպատակային խմբեր ձևավորելու նպատակով կիրառվում է «Նոր բնակիչների տեղաբաշխման» փաստաթուղթը, որը բաղկացած է 2 մասից. 1-ին մասը նախատեսում է տեղեկատվություն այն մասին, արդյոք անձը համապատասխանում է «Ջերմիկ անկյուն» խմբային տների չափանիշներին և արժեքներին, իսկ 2-րդ մասը ուղղված է ամենօրյա կենսագործունեությանն և ֆունկցիոնալությանը: Շատ կարևոր է որպեսզի խմբային տներում ներգրավված բնակիչները ունենան տարբեր աստիճանի ֆունկցիոնալ կարողություններ, ինչը հնարավորություն է տալիս փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը տներում նաև նպաստում է աշխատակազմի բալանսավորված աշխատանքի ապահովմանը: Այդ փաստաթղթի 2-րդ մասը թարմացվում է տարեկան 1 անգամ, նաև այլ փաստաթղթերի հետ համադրելով, կատարվում է տարեկան աշխատանքի անհատական պլանավորում՝ յուրաքանչյուր շահառուի համար: Շահառուների ներգրավման գործընթացը առավել արդյունավետ և ճշգրիտ կատարելու նպարակով գործընթացին ներգրավվում են մասնագիտացված թիմը՝ հոգեբանը և հեգեբույժը: Նրանք հանդիպումներ են ունենում հնարավոր շահառուների հետ, տեղեկատվություն են հավաքագրում «Նոր բնակիչների տեղաբաշխման» փաստաթղթի միջոցով և առկա տեղեկատվության ճշտությունը փորձում են գնահատել՝ մասնագիտական հարցադրումների միջոցով: Սա շատ կարևոր է շահառուների ներգրավման գործընթացում, քանի որ հաճախ փաստաթղթերում առկա և նաև հաստատությունների աշխատակազմի կողմից տրամադրված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

Շատ կարևոր հանգամանք է այն փաստը, որ «Ջերմիկ անկյուն» խմբային տան շահառու դարձած անձիք մինչև իրենց կյանքի վերջ հանդիսանալու են շահառու, բացառությամբ այն դեպքերում, երբ նրանց ազգականները (եթե այդպիսիք կան) ցանկություն են հայտնում իրենց վերադարձնել ընտանիքներ:

**Ծրագրի շահագրգիռ կողմերը**

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

Սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն է, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի իրականացումը համակարգող մարմինը: Նախարարությունը մշակում և իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության, բնակչության զբաղվածության և ժամանակավոր անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության, սոցիալական աջակցության, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, հաշմանդամություն ունեցող անձանցսոցիալական պաշտպանության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:Բացի այդ, նախարարությունը համակարգում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ծառայություններ (այդ թվում՝ շուրջօրյա խնամք, ցերեկային խնամք, տնային սպասարկում և այլն) մատուցող պետական և ոչ պետական կազմակերպություններ (դրամաշնորհների միջոցով):

**ՀՀ առողջապահության նախարարություն**

ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն է: Առողջապահության նախարարությունը մշակում և իրականացնում է բժշկական օգնության և սպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ, ախտորոշիչ, բուժական, դեղորայքային օգնության, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության, հարբժշկական այլ ծառայությունները) որակի բարձրացման, առողջապահական համակարգի արդյունավետության, մարդու և հանրության առողջության պահպանման, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիվանդանոցային և արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Նախարարությունը համակարգում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գործունեությունը:

**ՀՀ Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով**

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի համաձայն՝ մշտական հանձնաժողովները օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար են: Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական

հանձնաժողովը քննարկում է այն նախագծերը և հարցերը, որոնք վերաբերում են աշխատանքին, սոցիալական ապահովությանը, հաշմանդամությանը, զբաղվածությանը, ժողովրդագրությանը և այլն:

**ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով**

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի համաձայն՝ մշտական հանձնաժողովները օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար են: Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը քննարկում է այն նախագծերը և հարցերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանությանը, երեխայի իրավունքներին, կրոնին, կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը, ազգային փոքրամասնություններին, փաստաբանությանը, նոտարիատին, արհեստակցական միություններին, հասարակական կազմակերպություններին և այլն:

**Երևանի քաղաքապետարան**

Երևանի քաղաքապետարանը կառավարում է Երևանին պատկանող առողջապահական կազմակերպությունները (այդ թվում՝ առողջության առաջնային պահպանման օղակի բժշկական կազմակերպություններ), ՀՀ ԱՆ հետ համաձայնեցնելով կարող է իրականացնել քաղաքային առողջապահական ծրագրեր, կարող է գնահատել Երևանի բնակիչների առողջության ցուցանիշները և առաջարկություններ ներկայացնել ՀՀ ԱՆ, աջակցել Երևանում գործող առողջապահական կազմակերպություններին, նպաստում է առողջ ապրելակերպի քարոզչությանը:Սոցիալական պաշտպանության բնագավառում կազմակերպում է քաղաքային սոցիալական կազմակերպությունների գործունեությունը, աջակցում է պետական սոցիալական ծրագրերի իրականացմանը, հասարակական կազմակերպությունների գործունեությանը, իրականացնում է մարդասիրական օգնության ծրագրեր:

**Տեղական ինքնակառավարման մարմիններ (քաղաքային և գյուղական համայնքներ)**

Տեղական ինքնակառավարման մարմինները տրամադրում են սոցիալական ծառայություններ (պետության պատվիրակված լիազորությունների, համայնքային ծրագրերի և կամավոր լիազորությունների շրջանակներում), տարածքային առանձնահատուկությունների հիման վրա մշակում և իրականացնում են տեղական սոցիալական ծրագրեր, աջակցում են սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը՝ մեծացնելով դրանց հասցեականությունը, համագործակցում են աջակցող ցանցի հետ, տնային այցելությունների և այլ լիազորությունների շրջանակներում իրականացնում կարիքի գնահատում: Այս առումով կարևորվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների, դեպք վարողների, համայնքային սոցիալական աշխատողների լիազորություններն ու գործառույթների շրջանակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, նրանց միջավայրի, համայնքի հետ աշխատանքում:Առողջապահության բնագավառում համայնքը կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպությունների գործունեությունը:

**Քաղաքացիական. հասարակություն (Մոնիթորինգի խումբ, ՀԿ-ներ, անհատ փորձագետներ, հետազոտողներ, իրավապաշտպաններ)**

Քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություններ ներգրավված են քաղաքականությունների մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և անհատ փորձագետները կարևոր դեր ունեն օրենսդրության կատարելագործման և հետազոտությունների հիման վրա քաղաքականությունների առաջարկությունների մշակման ու խթանման գործում:Կազմակերպությունները (անհատները) կարող են ներգրավվել ինչպես տարբեր խորհրդակցական մարմիններում (գերատեսչական և թեմատիկ), այնպես էլ քրեակատարողական հիմնարկներում, խնամքի հաստատություններում և հոգեբուժական հաստատություններում հասարակական դիտորդական խմբերի աշխատանքներին:

**Մարդու իրավունքների պաշտպան (ներառյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհուրդը)**

Մարդու իրավունքների պաշտպանը, որպես անկախ պաշտոնատար անձ, հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների վերականգմանը, օրենսդրության կատարելագործմանը: Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություններից է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման մեխանիզմի կարգավիճակները: Պաշտպանն իր տարեկան և արտահերթ զեկույցների միջոցով պարբերաբար անդրադառնում է նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումներին: Պաշտպանին առընթեր գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհուրդ, որը ձևավորվել է ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից:

**Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպություններ**

Մասնակցության սկզբունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածում և Քաղաքացիական և քաղաքական իրավուքների միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածում: Մասնակցությունը միջազգային իրավունքում դիտարկվում է և՛ որպես սկզբունք, և՛ որպես իրավունք: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ հասարակության կյանքի տարբեր ոլորտներում ուղղակի կամ ներկայացուցիչ կազմակերպությունների միջոցով մասնակցության ապահովման պարտավորությունը սահմանված է նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով և լավ մեկնաբանված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 7-ում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ 2017 թվականին հրապարակված եզրափակիչ դիտարկումներում Հայաստանի Հանրապետությանն առաջարկել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց կազմակերպությունների միջոցով լիարժեք և արդյունավետ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում և հաշմանդամությանն առնչվող օրենսդրությունը, քաղաքականությունները, ռազմավարությունները և գործողությունների պլանները մշակելիս. «Հայաստանի Հանրապետությունը] պետք է տրամադրի անհրաժեշտ աջակցությունը և խելամիտ հարմարեցումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց ներկայացուցիչների խորհրդակցությունների գործընթացում, ներառյալ ... հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ... ունեցող անձանց մասնակցությունը»:

**Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ (տուն-ինտերնատներ)**

Հաստատությունները սովորաբար բնութագրվում են, որպես ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք մեկուսացած են կամ զրկված են իրենց առօրյա կյանքին վերաբերող որոշումներ կայացնելուց: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կացարան, շուրջօրյա խնամք հաշմանդամություն ունեցող անձանց համար, մասնավորապես՝ հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաստատությունները կազմակերպում են իրենց բնակիչների առաջնային բժշկական օգնությունը և սպասարկումը, սոցիալ-հոգեբանական օգնությունը, սնունդը, ազատ ժամանցը, կրթությունը և աշխատանքային վերականգնումը:

**Միջազգային դերակատարներ**

«Միջազգային դերակատարներ» սահմանումն ընդգրկում է կառավարական և ոչ կառավարական կառույցներին, որոնք Հայաստանի Հանրապետությունում ունեն իրենց ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը հոգեկան առողջության խնդիրներ անձանց իրավունքների քաղաքականության վրա: Դրանք են՝ դեսպանությունները և օտարերկրյա կառավարական կազմակերպությունները, միջազգային հասարակական կազմակերպությունները, զարգացման կազմակերպությունները, միջազգային

պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինները: Միջազգային դերակատարները առանցքային են ոչ միայն տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների ներդրման առումով, այլ նաև մարդու իրավունքների օրակարգը բարեփոխումների օրակարգում ընդգրկելու և իրականացմանը աջակցելու, կատարման մշտադիտարկումն իրականացնելու առումով:

**Ռիսկերի գնահատում**

Քանի որ փոքր տներում գործունեությունը կրում է մշտական բնույթ, որտեղ իրականացվում է ամենօրյա խնամք հոգեկան և մտավոր խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ՝ ապահովելով նրանց առաջնային կարիքները (սնունդ, դեղորայք, հիգիենա, սեզոնային հագուստ և այլն), ծրագիրը կարիք ունի անխափան և շարունակական ֆինանսավորման: Սակայն մինչ օրս առկա է անկայուն ֆինանսավորում, որը մեծագույն ռիսկ է դիտարկվում խմբային փոքր տների կայուն և շարունակական գործունեության համար, որն էլ իր հերթին ուղղակիորեն բացասական է անդրադառնում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կայուն և ապահով կյանք վրա: Եվ որպես լավագույն լուծում, առաջարկվում է ստեղծել մեխանիզմներ, որտեղ ֆինանսավորման առնվազն 90%-ը ապահովվի կառավարության կողմից և կրի երկարատև պայմանագրերի կամ, առնվազն հուշագրի բնույթ: Զուգահեռաբար, առաջարկվում է կառավարության և ծրագիրը իրականացնող կողմերի հետ համատեղ մշակվեն բոլոր չափորոշիչները, մոնիթորինգի և վերահսկողության մեխանիզմները՝ փոքր տների գործունեությունը առավել արդյունավետ և ստանդարտներին համապատասխան իրականացնելու նպատակով:

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ՝ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 2
2022 թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Ե պայմանագրի

## Դրամաշնորհային հաշվետվություն N_____________

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | |
| Դրամաշնորհի N | |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | |
| Հաշվետու ժամանակահատված | |
| Ներկայացման օր | |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| |

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մխիթարյան<br><br>________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br><br>________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

**Հավելված N 3**
2022թ. «01» «18»
N *ԴՏՊ-1160-11013/Ե* պայմանագրի

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի------------------------------------------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

| Ծախսային հոդվածներ | | Հաստատված նախահաշվի գումարը | | Հաշվետու ժամանակահատվածում | | | Տարեսկզբից աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը** | ծածկագիրը | Պետական բյուջեից | Այլ միջոցներից նախատեսված | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | Այլ աղբյուրների անվանումները |
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝** | **x** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ** | ***4100*** | | | | | | | | | |
| **Էներգետիկ ծառայություններ** | **4212** | | | | | | | | | |
| **Կոմունալ ծառայություններ** | **4213** | | | | | | | | | |
| **Կապի ծառայություններ** | **4214** | | | | | | | | | |
| **Ապահովագրական ծախսեր** | **4215** | | | | | | | | | |
| **Գույքի և սարքավորումների վարձակալություն** | **4216** | | | | | | | | | |
| --------- | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ900011039675
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

________________
(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

*Անվանումը*՝ «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ
*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 2204533500104000
ՀՎՀՀ՝ 01242562
Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան

________________
(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ. Տ.

**Հավելված 4**
2022թ. «01» «18» -ին
կնքված **N ԴՏՊ-1160-11013/Ե** պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

| Միջոցառման | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը | անվանումը | Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| Լոտ 1 Երևան | 99999999/559 | «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» Երևան | 1537.8 | 3074.4 | 4613.5 | 6145.1 | 7695.3 | 9226.9 | 10758.6 | 12308.7 | 13840.4 | 15316.7 | 16903.7 | 18453.864 | **18453.864** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
** *հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>_______________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը*՝ «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ՝ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br>_______________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 5
2022թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Ե պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պետական մարմին
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

**ԱԿՏ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

| N | Իրականացված միջոցառման | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | գործառույթի համառոտ նկարագիրը | արդյունքը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/ |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ՝ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 6
2022 թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏԴ-1160-11013/Ե պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **անվանումը** | **նկարագիրը** | **կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները** | **ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները** | **միջոցառման իրականացման վերջնաժամկետը** | **հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը** | **պահանջվող գումարը (դրամ)** |
| | «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում | Ծրագրի հիմնական նպատակն է հաշմանդամություն ունեցող, այդ թվում մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց (այսուհետ՝ շահառու) կացարանով ապահովումը և, շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով, նրանց սոցիալական ներառումը հասարակություն: Ծառայություններից | Կազմակերպությունը, ըստ շահառուի գնահատված կարիքի, տրամադրում է հետևյալ ծառայությունները՝<br>1) ապահովում է կացարանով, անհրաժեշտ կահույքով.<br>2) հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով՝ տարիքասեռային առանձնահատկությունների և եղանակային պայմաններին համապատասխան<br>3) անկողնային պարագաներով. | Խմբային տունն ապահովում է հետևյալ որակական ցուցանիշները.<br>1) շահառուներին անհրաժեշտ բնակելի տարածքով և կոմունալ-կենցաղային այլ պայմաններով ապահովում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N N 1533-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների<br>2) սոցիալ-հոգեբանական | 31.12.2022 | Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է ամսական հաշվետվություն և կատարված աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն է ներկայացնում նախարարություն: | **18 453 864 (տասնութ միլիոն չորս հարյուր հիսուն երեք հազար ութ հարույր վաթսուն չորս) ՀՀ դրամ** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարող են օգտվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կացարանի և խնամքի ու այլ սոցիալական ծառայությունների կարիք ունեցող 18 տարին լրացած՝ հաշմանդամություն ունեցող այն անձինք, որոնց ինքնասպասարկման ունակությունները և սոցիալական հմտություններն ու կարողությունները հիմնականում պահպանված են և նրանք կարող են ինքնուրույն ապրել, կենցաղավարել (մասամբ՝ սոցիալական սպասարկողի օգնությամբ), սակայն կամ՝ չունեն կացարան ու ընտանիք, կամ՝ ընտանիքը հրաժարվել է նրանց խնամքից: Շուրջօրյա խնամքի ծառայությունները տրամադրվում են | 4) անձնական հիգիենայի պարագաներով.<br>5) սննդով՝ առնվազն օրական երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող շահառուներին տրամադրվում է բժշկի կողմից նշանակված դիետիկ սնունդ.<br>6) ըստ անհրաժեշտության՝ ամենօրյա կամ որոշակի պարբերականությամբ բուժզննության իրականացում՝ կազմակերպության գտնվելու վայրի տարածքային սպասարկման պոլիկլինիկայի միջոցով կամ կազմակերպության բժշկի կողմից.<br>7) հոգեբույժի խորհրդատվությամբ՝ առնվազն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.<br>8)սոցիալ-հոգեբանական | խորհրդատվության տրամադրում տարեկան յուրաքանչյուր շահառուին առնվազն 8 անգամ և ըստ անհրաժեշտության, կատարելով համապատասխան գրառումներ՝ ըստ առանձին ծառայությունների (սոցիալական խորհրդատվություն, հոգեբանական օգնություն), նշելով՝ ծառայություն ստացած անձանց անուն, ազգանունը և ծառայությունից օգտվելու ամսաթիվը, ինչպես նաև կատարում է համապատասխան գրառում շահառուների սոցիալական անհատական ծրագրում.<br>3)խմբային տան շահառուների կարիքների գնահատում | | (info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով) | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | առավելագույնս ընտանեկանին մոտ պայմաններում՝ փոքր խմբային տներում:<br><br>Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Կազմակերպությունը ծառայությունները տրամադրելիս պետք է առաջնորդվի՝<br>• «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով<br>• «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով<br>• ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1533-Ն որոշմամբ և ոլորտը | օգնության տրամադրում.<br>9)իրավական խորհրդատվության տրամադրում.<br>10) ըստ անհրաժեշտության՝ կազմակերպում է աջակցող միջոցներով ապահովումը.<br>11) աջակցում է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ձեռքբերման, նախապատրաստման, բժշկական կազմակերպություններ ուղեկցման և այլ հարցերում.<br>12) աջակցում է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրման գործընթացին.<br>13) ազատ ժամանցի կազմակերպումը. | տարեկան առնվազն մեկ անգամ, կատարելով համապատասխան գրառում շահառուների անհատական ծրագրերում.<br>4) աջակցություն խմբային տան շահառուների թվից տարեկան առնվազն մեկ հոգու աշխատանքի տեղավորման հարցում, համագործակցելով տարածքի զբաղվածության ծառայության կենտրոնի հետ.<br>5)աշխատանքային թերապիայի տարբեր տեսակներով զբաղվածության ապահովում<br>6) մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում տարեկան առնվազն 8 անգամ, յուրաքանչյուր եռամսյակ՝ առնվազն | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կանոնակարգող այլ իրավական ակտերով:<br><br>Կազմակերպությունը աշխատանքներն իրականացնում է շահառու կարիքների գնահատման արդյունքում ձևավորված անհատական սոցիալ-վերականգնողական ծրագրին համապատասխան: Գնահատման ձևաչափը և սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի ձևաչափը մշակվում է նախարարության հետ համաձայնեցված մեթոդաբանությամբ (կցվում է): | 14) մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպում կամ անցկացում, տարբեր խմբակների կազմակերպում՝ ըստ շահառուների նախասիրության.<br>15)աշխատանքային թերապիայի և արտթերապիայի կազմակերպումը և իրականացումը. զբաղվածության ապահովումը.<br>16) ինքնասպասարկման ունակությունների զարգացում և կենցաղավարման հմտությունների ուսուցանում.<br>17) անձի վերականգնմանն ու սոցիալականացմանն ուղղված այլ աշխատանքներ: | 2 միջոցառում, ապահովելով յուրաքանչյուր միջոցառմանը խմբային տան շահառուների ընդհանուր թվի առնվազն 90 %-ի մասնակցությունը<br>7) կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված թրեյնինգների կազմակերպում՝ շահառուների առնվազն 80 %-ի մասնակցությամբ, այդ թվում՝ նաև աշխատանքային պրակտիկայի կազմակերպում:<br>8) Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: | | | |
| | **Ընդամենը** | | | | | | |

**Լրացուցիչ դրույթներ**

- Ծառայություններ տրամադրող կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է լինի հոգեկան (մտավոր) առողջության ոլորտում մասնագիտացված և լիազոր մարմնում հավաստագրված, համալրված լինի համապատասխան մասնագետներով, ունենա առողջապահության կամ սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի տարածքի մատչելիությունը (թեքահարթակ, վերելակ, սանհանգույց, հարմարեցված գույք և այլն), տրանսպորտային միջոցի առկայություն՝ շահառուների տեղափոխումը, ըստ անհրաժեշտության կազմակերպելու նպատակով և ունենա մասնագիտական անձնակազմ:
- Մեկ խմբային տանը կարող են ապրել միայն մտավոր կամ միայն հոգեկան առողջություն խնդիրներ ունեցող շահառուներ:

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը*՝ «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամ<br>*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան Սիլիկյան 4փ. 1նրբ. 14/16-1<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 2204533500104000<br>ՀՎՀՀ՝ 01242562<br>Տնօրեն՝ Մուշեղ Կիրակոսյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |